Ազատ անկման օրենքը կարելի է ցուցադրել նաև լաբորատոր պայմաններում: Ուղղաձիգ խողովակի մեջ տեղադրենք կապարե գնդիկ և փետուր: Եթե խողովակն արագ շրջենք 180°-ով, կնկատենք որ գնդիկն ավելի շուտ է հասնում խողովակի հատակին, քան փետուրը (նկ.ա): Իսկ եթե խողովակից պոմպով օդը հանենք (նկ.բ) և փորձը կրկնենք, կնկատենք, որ փետուրը և գնդիկը խողովակի հատակին են հասնում միաժամանակ (նկ.գ): Եթե առանց սկզբնական արագության ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմինները հավասար ժամանակամիջոցներում անցնում են հավասար ճանապարհներ, նշանակում է, որ նրանք շարժվում են նույն արագացմամբ:



ա բ գ